Բայց Հայաստանի ազատութեան հարցը դրանով չմեռաւ: Հայ ժողովրդի ու հայ հայրենիքի մեծագոյն մասը այժմ գտնուում էր տաճիկների իշխանութեան ներքոյ: Իսկ տաճկական իշխանութիւնը, իր բարբարոսութեամբ, ոչնչով պակաս չէր պարսկականից, եթէ չասենք՝ դեռ աւելի էր: Տաճկահայութիւնը դընընդում էր նոյն ծանր վիճակում, գուցէ եւ աւելի, ինչ որ պարսկահայութիւնը:

Եւ ահա շատ բնական ձեւով, 19-րդ դարի սկիզբներից, հրապարակ է գալիս Տաճկահայաստանի ազատութեան հարցը եւ մինչեւ օրս էլ զրաղեցնում է հայ քաղաքական միտքը:

Հրապարակ են գալիս հայ յեղափոխական կուսակցութիւնները, իրենց քաղաքական ծրագիրներով, նախկին մելիքների, իշխանների ու կաթողիկոսների փոխարէն եւ բոլոր թափով գործի լծուում:

Դիւանագիտական միջոցները եւ արտաքին ուժերի մասնակցութիւնը հայ ժողովրդի ազատութեան գործում — որ միակ ճանապարհն էին համարուում հնում — այժմ էլ չեն արհամարհուում, սակայն ջանքերի ծանրութեան կենդրոնը դրսից տեղափոխուում է ներսը, Եւրոպայից ու Ռուսաստանից դէպի Հայաստան: Այժմ հա՛յ ժողովուրդն է նկատուում այն գլխաւոր ոյժը, որը պիտի իրականացնի իր ազատութիւնը, այն էլ ո՛չ թէ խաղաղ-կուլտուրական ճանապարհով, այլ ապստամբութեան եւ յեղափոխութեան միջոցով:

Ու եթէ այդ դժուարին գործում հայ ժողովրդին օգնութեան գան նաեւ եւրոպական պետութիւնները կամ նրանցից մէկն ու մէկը — այդ դէպքում աւելի կը հեշտանայ հայ ժողովրդի հերոսական պայքարը իր ազատութեան համար:

Ահա թէ ինչո՛ւ այդ ուղղութիւնը կամ օրիենտացիան մենք անուանեցինք հայ-օտար օրիենտացիա:

Բայց այդ մասին մի աւելի պատեհ առթիւ:

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

(ԱՄՍԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

Գրեց՝ Ա. ԱՔԱՆ

ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԿԵԱՆՔ

Կեանքը Հայաստանում դարձել է անտանելի: Մի կտոր հացի խնդիրը դերիշխում է մարդկային մազմուխնների մտքի և հոգու վրայ, և օրէ ցօր աւելի ու աւելի նշմարուող սովի ուրուականը ստիպում է մարդկանց՝ մտաւորական թէ գիւղացի՝ իրենց փրկութեան միակ ելքը համարել փախուստը Խորհրդային դժոխքից: Վտանգի ենթարկելով իրենց կեանքը Խորհրդային քաղաքացիները անցնում են Արաքսը եւ ապաւինում Պարսկաստան: Շատերին քշում է կառավարական տերրորը, որ նոր թափով վերսկսուել է մասնաւորապէս վերջին ամիսներում:

Այսօր մենք ստոյգ տեղեկութիւններ ու-